

*Առանց հարկ վճարողների մոտ  
ստուգումների/վերստուգումների իրականացման  
հարկ վճարողի հարկային  
պարտավորությունների ճշտումը*



***Համառոտ***

2018 թ. հոկտեմբերի 25-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Առանց հարկ վճարողների մոտ ստուգումների/վերստուգումների իրականացման հարկ վճարողի հարկային պարտավորությունները ճշտելու կարգի մասին» N1177-Ն որոշումը, որի գործողությունը տարածվում է 2018 թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

***Կարգավորման օրենսդրական  
հիմքը***

Սույն կարգով կարգավորվում են ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ հարկային մարմնի կողմից առանց հարկ վճարողների մոտ ստուգումների /վերստուգումների իրականացման հարկ

վճարողի հարկային պարտավորությունները/կանխավճարները ճշտելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

***Հարկային մարմնի կողմից հարկ վճարողի հարկային պարտավորությունները ճշտվում են հետևյալ դեպքերում՝***

- հարկային մարմնին հայտնի են դարձել հարկ վճարողի կողմից ներկայացված հարկային հաշվարկներում անճշտություններ, որոնք օրենսգրքով սահմանված դեպքերում ու կարգով հնարավոր չէ ճշտել ճշտված հարկային հաշվարկներ ներկայացնելու միջոցով,
- Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված դեպքերում անհրաժեշտ է վերահաշվարկել հարկ վճարողի հարկային պարտավորությունները:

***Հարկային պարտավորությունները ճշտվում կամ վերահաշվարկվում են՝***

- հարկային մարմնի նախաձեռնությամբ,
- հարկ վճարողի դիմումի հիման վրա:

***Հարկային պարտավորությունները ճշտվում են հետևյալ դեպքերում՝***

- վարչական ակտով առաջադրված հարկային պարտավորությունների հաշվարկման ժամանակ հարկային մարմնի կողմից թույլ են տրվել թվաբանական, մեխանիկական, տեխնիկական սխալներ, կամ կիրառվել է պատասխանատվության սխալ չափ,
- հարկային մարմնի կողմից իրականացված հարկային հսկողության արդյունքում առաջադրվել է պարտավորություն, կամ պարտավորությունը ծագել է հարկ վճարողի կողմից ներկայացված հարկային հաշվարկով, սակայն հետագայում սահմանվել է արտոնություն, փոխվել է հարկային պարտավորության չափը կամ հարկ վճարողի հարկման համակարգը,
- հարկ վճարողի կողմից ներկայացված՝ արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարությունում առկա են գործունեության իրականացման վայրի ելակետային

տվյալի կամ լրացուցիչ գործակցի անճշտություններ,

- հարկ վճարողի մոտ հարկային մարմնի կողմից մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ նույնպիսի խախտում արձանագրված լինելու դեպքում առաջադրվել է տուգանք, սակայն հետագայում նախորդ նույնպիսի խախտումն արձանագրած ակտը անվավեր է ճանաչվել,
- վերադասության կարգով վերանայվել է վարչական ակտը:

***Հարկային պարտավորությունների ճշտման գործընթացի վարույթը հարուցվում է՝***

- հարկ վճարողի դիմումը հարկային մարմնում ստացվելու օրվանից,
- պարտավորությունների ճշտման անհրաժեշտության և հիմքերի վերաբերյալ հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից զեկուցագիր ներկայացվելու օրվանից:

***Հարկային պարտավորությունների ճշտման ժամկետները՝***

- դիմումի ստացման օրվանից կամ զեկուցագիրը ներկայացվելու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմնին իրականացնում է տվյալների ուսումնասիրություն,
- ուսումնասիրության արդյունքներով տասն աշխատանքային օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է հարկ վճարողի հարկային պարտավորությունները ճշտելու մասին արձանագրություն, որը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է հարկ վճարողին:

***Հարկ վճարողի դիմումի հիման վրա հարկային պարտավորությունները չեն ճշտվում հետևյալ դեպքերում՝***

- հարկային պարտավորությունները հաշվարկված են ՀՀ հարկային օրենսդրության համապատասխան,

- հարկային պարտավորությունների ճշտման վերաբերյալ դիմումին չեն կցվել հիմնավորող այն փաստաթղթերը, որոնք հարկային մարմնում առկա չեն,
- ուսումնասիրության արդյունքներով չեն հիմնավորվել դիմումում նշված հանգամանքները,
- լրացել են հարկային պարտավորությունների ճշտումների կատարման համար Օրենսգրքով նախատեսված ժամկետները:

***Հարկ վճարողի կողմից ոչ լիարժեք փաստաթղթերի ներկայացման դեպքում թերությունների ճշգրտման հնարավորությունը***

- Հարկ վճարողի կողմից ներկայացրած դիմումին հարկային պարտավորությունների ճշտումը հիմնավորող փաստաթղթեր կցված չլինելու կամ ոչ լիարժեք ներկայացված լինելու դեպքերում, հարկային մարմինը հարկ վճարողին գրավոր տեղեկացնում է առկա թերությունների մասին և առաջարկում է վերացնել դրանք՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Առկա թերությունները նշված ժամկետում չվերացվելու դեպքում՝ դիմումը գրավոր հիմնավորմամբ մերժվում է:

***Հարկային պարտավորությունների ճշտումը կամ ճշտման մերժումը***

- Հարկ վճարողի դիմումի հիման վրա հարկային պարտավորությունների ճշտման գործընթաց չիրականացվելու դեպքում՝ ուսումնասիրություն կատարելու համար սահմանված ժամկետին հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, հարկային մարմինն տրամադրում է ճշտման գործընթաց չիրականացվելու վերաբերյալ համապատասխան ակտ՝ նշելով ճշտման գործընթաց չիրականացվելու հիմքը:
- Հարկային պարտավորությունների ճշտման վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա հարկային մարմինը նույն օրը

կազմում է եզրակացություն, որում ներառված տվյալները երեք աշխատանքային օրվա ընթացքում ինքնաշխատ կերպով արտացոլվում են հարկ վճարողի անձնական հաշվի քարտում:

***Հարկային պարտավորությունների ճշտման վերաբերյալ կազմված արձանագրության և եզրակացության բողոքարկումը:***

ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 25-ի N 1177-Ն որոշմամբ սահմանված արձանագրությունը կամ եզրակացությունը կարող են բողոքարկվել ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված բողոքարկման ընթացակարգերով (գլուխ 80-րդ):

## ***Եկեք խոսենք***

Մանրամասների համար, թե ինչպես կարող են ազդել սույն փոփոխությունները ձեր բիզնեսի վրա, դուք կարող եք կապ հաստատել մեզ հետ՝

**«ՓրայտութեքհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հարկային և իրավաբանական ծառայություններ, Հայաստան**

Հասմիկ Հարությունյան  
+(374) 10 51 21 66  
[hasmik.harutyunyan@pwc.com](mailto:hasmik.harutyunyan@pwc.com)

Մայքլ Ահերն  
+7 (727) 330 32 00  
[michael.ahern@pwc.com](mailto:michael.ahern@pwc.com)

© 2019 «ՓրայտութեքհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն փաստաթղթում «PwC» ասելով հասկանում ենք «ՓրայտութեքհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ն, որը «ՓրայտութեքհաուսԿուպերս Ինթերնեյշնլ Լիմիթիդ» համաշխարհային ցանցի անդամ ընկերություններից է, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է առանձին իրավաբանական անձ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվությունը տրամադրվում է բացառապես քննարկվող առարկայի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով: Այն չպետք է օգտագործվի փոխարինելու մասնագիտական հաշվապահական, հարկային, իրավաբանական կամ այլ խորհրդատուներին: Սույն փաստաթուղթը PwC ընկերության կողմից նախատեսված կամ պատրաստված չէ օգտագործման համար և չի կարող օգտագործվել հարկ վճարողի նկատմամբ կիրառվող հարկային պատժամիջոցներից խուսափելու նպատակով: Նախքան որևէ որոշում կայացնելը կամ ցանկացած գործողություն կատարելն անհրաժեշտ է խորհրդակցել PwC ընկերության մասնագետների հետ: Մենք որևէ երաշխիք չենք տալիս սույն հրապարակման մեջ տեղ գտած տեղեկատվության ճշտության վերաբերյալ, ինչպես նաև ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում ցանկացած հաշվետվության կամ եզրակացության համար կամ որևէ սխալի կամ բացթողման համար: